## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԵՌԱԳՐԵՐԸ ՎՐԱՍՏԱՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

### ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՄԵԼՔԻՍԵԴԵԿ Գ-ԻՆ

ԹԲԻԼԻՍԻ

Ուրախ սրտով վերադառնալով տուն, Իջման Ս. Սեղանի առաջ ծունկի եկած, Ս. Էջմիածնին հաղորդեցինք ողջույնը Ս. Մցխեթայի: Աղոթեցինք նաև երկնային Տիրոջ՝ Ձերդ Սրբության քաջառողջության, արևշատության և աստվածահաճո գործերի հաջողության համար:

Թո՛ղ Աստված հաստատ պահի և ամրապնդի Վրաց և Հայ եկեղեցիների եղբայրական միությունը:

Մեկ անգամ ևս ընդունեցեք Մեր խորին շնորհակալությունը՝ ջերմ, եղբայրական ընդունելության համար, մինչև Մեր նոր հանդիպումը Ս. Էջմիածնում:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

Վ. Ա. Զ Գ Ե Ն Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

---

### ՎՐԱՑԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՁՈՒԲԻՆԻՁԵԻՆ

ԹԲԻԼԻՍԻ

Վերադառնալով Էջմիածին, կամենում ենք մեկ անգամ ևս հայտնել Մեր շնորհակալությունը այն ջերմ ընդունելության համար, որ Դուք, Պարոն Նախագահ, ցույց տվեցիք Մեր նկատմամբ:

Միածնի Իջման Ս. Սեղանի առաջ աղոթում ենք առ Աստված՝ շքնաղ Վրաստանի ծաղկման ու բարգավաճման, վրաց ազնիվ ժողովրդի երջանկության ու բարօրության, հայ և վրաց ժողովուրդների բարեկամության ամրապնդման համար:

Մաղթում ենք Ձեզ քաջառողջություն և Ձեր շինարար գործերին հաջողություն ի փառս Ձեր Հայրենիքի և Ձեր հարազատ ժողովրդի:

Անկեղծորեն՝

Վ Ա. Զ Գ Ե Ն Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

## ՎՐԱՑԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐ ՊԱՐՈՆ ՇԱԼՈՒՏԱՇՎԻԼՈՒՆ

ԹԲԻԼԻՍԻ

Եղբայրական Վրաստանի մայրաքաղաքից էջմիածին վերադառնալով, կամենում ենք մի անգամ ևս անկեղծորեն շնորհակալություն հայտնել Ձեզ՝ Մեր նկատմամբ ցույց տրված անկեղծ բնդունելության համար:

Ձեր չքնաղ Երկրից ստացված տպավորությունները երբեք չեն մոռացվի:

Թո՛ղ ծաղկի գեղեցիկ Վրաստանը և կեցցե՛ վրաց տաղանդավոր ժողովուրդը: Թո՛ղ անի ու ամրապնդվի Հայ և Վրաց Եկեղեցիների եղբայրական միությունը:

Օրհնությամբ և բարեմաղթություններով՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

